**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ**
**ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ**

14 հոկտեմբերի 2022 թվական թիվ 180-Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՐԵՔ ԿՏՈՐ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 23 . 1-րդ կետի դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն համարվող թվով երեք կտոր հողամասերն՝ առավել արդյունավետ պահպանելու, բարելավելու և նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու նպատակով, դասական աճուրդ-վաճառքի միջոցով օտարել՝ համաձայն հավելվածի:

2.Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերի օտարման մեկնարկային գները՝ համաձայն հավելվածի, որոնցում ներառված են նաև համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցման նպատակով կատարված ծախսերը:

3.Առաջարկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերն ըստ լոտերի օտարելու նպատակով, կազմակերպել հրապարակային սակարկություն:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝**

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

Մ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Կ. ԱՐՇԱԿՅԱՆ

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ա. ԴՐՄԵՅԱՆ

Ա. ԻԳԻԹՅԱՆ

Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Լ. ՂԱԶԱՐՅԱՆ

Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Գ. ՄԿՐՏՉՅԱՆ

Ա. ՄՔՈՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ**
**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

14 հոկտեմբերի 2022 թվական
գյուղ Ախուրյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ախուրյան համայնքի
ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 14-ի 180-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑԱՆԿՆ ԸՍՏ ԼՈՏԵՐԻ

| Լոտի համարը | Հողամասի տվյալները | | | | | Օգտագործման նպատակը | Գրանցված սահմանափակումները | Մեկնարկային գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Գտնվելու վայրը | Կադաստրային ծածկագիրը | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը/հողատեսքը | Մակերեսը (հեկտար) | | | |
| 1. | ՀՀ ՇՄ Ախուրյան, գյուղ Ախուրիկ, | 08-006-0082-0001 | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական | Գյուղատնտեսական արտադրական | 0,03 | Առևտրի, սպասարկման օբյեկտ կառուցելու համար | Չկան | 127000 |
| 2. | ՀՀ ՇՄ Ախուրյան, գյուղ Կրաշեն | 08-057-0008-0001 | Գյուղատնտեսական | Արոտավայր | 1,78481 | Որպես արոտ | Չկան | 480000 |
| 3. | ՀՀ ՇՄ Ախուրյան գյուղ Մարմաշեն, 6-րդ փողոց, 16 | 08-078-0013-0005 | Բնակավայրերի | Բնակելի կառուցապատում | 0,009856 | Բնակելի կառուցապատման համար | Չկան | 77000 |